



Ուսանողներ (§ 16b AufenthG) միայն Գերմանիայի համար

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել: Հերթագրվել կարող եք միայն առցանց եղանակով: Առցանց հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքի միջոցով. www.eriwan.diplo.de :

- Ոչ գերմանալեզու փաստաթղթերը՝ բացառությամբ անձնագրի տվյալների էջի, պետք է ներկայացնել գերմաներեն հաստատված թարգմանությամբ:
- Վկայականները, դիպլոմները և նմանատիպ փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և ապոստիլով/լեգալիզացիայով: Բնօրինակները կվերադարձվեն:
- Վիզայի համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի ԳԴՀ աշխատանքի դաշնային գործակալության (Bundesagentur für Arbeit) և համապատասխան վայրի Օտարերկրացիների հարցերով մարմնի (Ausländerbehörde) համաձայնությունը: Վիզան կարող է տրվել միայն, երբ դեսպանությունը ստանա այս համաձայնությունները:
- **Դիմումի քննությունը և մշակումը սովորաբար տևում է 4-16 շաբաթ**, առանձին դեպքերում՝ ավելի երկար:
- Ավիատոմսի ամրագրում վիզայի համար չի պահանջվում, ինդրում ենք ավիատոմս ամրագրել միայն վիզա ստանալուց հետո:
- Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար:
- Ոչ լիարժեք փաստաթղթերը ձգձգում են դիմումի ընթացքը և կարող են մերժման պատճառ դառնալ:
- **Խնդրում ենք դիմումի մշակման վերոնշյալ ժամանակահատվածում ձեռնպահ մնալ դիմումի ընթացքի վերաբերյալ հարցումներ անելուց:** Այդ հարցումները էապես ծանրաբեռնում են վիզայի բաժնի աշխատանքը, այդ պատճառով վիզայի բաժինը չի կարող պատասխանել:
- Վիզայի վճարը կազմում է 75 եվրո, որը վճարվում է դրամով՝ դիմումը հանձնելիս:

Դիմումի փաստաթղթերը

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է **անձամբ** ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը: Մկրտություններն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել **բնօրինակով**, յուրաքանչյուրից նաև՝ **երկուական պատճեն**: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ փաստաթղթերը պատուհանի մոտ պետք է հանձնել **երկու նույնական փաթեթով** (յուրաքանչյուր փաթեթը սկսվում է դիմում-հարցաթերթիկով և պարունակում ստորև թվարկված փաստաթղթերի պատճենները)՝ դասավորելով նշված հերթականությամբ: Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի** թղթի վրա: Խնդրում ենք թղթերը **չկարել, չամրացնել**:

Դեսպանությունն ուղարկված այն ֆաքսերը կամ գրությունները, որոնց վրա բացակայում է վիզայի գործի համարը, չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին:

Ոչ լիարժեք դիմումները չեն ընդունվում:

Դեսպանությունը հուշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82-ի՝ յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, եթե որևէ փաստաթուղթ բացակայում է, դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- գերմաներենով կամ անգլերենով լիարժեք լրացված 2 դիմում-հարցաթերթիկ՝ ներառյալ Կացության մասին դաշնային օրենքի §54-ով սահմանված իրազեկումը: Հարցաթերթիկը կարող էք գտնել դեսպանության կայքում՝ սույն հղումով. <https://videx-national.diplo.de>,
- անհրաժեշտության դեպքում՝ երկու լիարժեք լրացված և ստորագրված հայտարարություն հասանելիության ([հղում](#)) վերաբերյալ,
- 3 նոր, բիոմետրիկ լուսանկար, երկուսը խնդրում ենք ստանձել դիմում-հարցաթերթիկներին,
- գործող ճամփորդական անձնագիր, որը վավերական լինի առնվազն 6 ամիս, (անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ անձնագիրը տրված լինի ոչ ավելի վաղ, քան տասը տարի առաջ),
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, վիզա կամ որևէ այլ նշում,
- բուհ կամ նախաբուհական քոլեջ ընդունվելու մասին տեղեկանքի բնօրինակը՝ երկու պատճենով, որտեղ նշված լինի ուսման լեզուն և ֆիզիկական ներկայության պարտադիր հանգամանքը,
- բացատրագիր նախատեսված ուսման վերաբերյալ. հիմնավորում/մոտիվացիա (նաև բուհի ընտրության), հետագա կոնկրետ պլանները, անհրաժեշտության դեպքում՝ տեղեկություններ ուսմանը նախապատրաստվելու մասին, օրինակ՝ գերմաներենի դասընթաց Հայաստանում (բացատրագիրը ներկայացնել երկու լեզվով՝ գերմաներեն և անգլերեն): Հիմնավորումը պետք է շարադրել ինքնուրույն և անհատապես, առանց որևէ մեկի տրամադրած ստանդարտ ձևակերպումների. դեսպանությունը տարբերում է դրանք:
- լիարժեք ձևակերպված կենսագրություն (գերմաներեն կամ անգլերեն)՝ կրթության, առկայության դեպքում նաև մասնագիտական գործունեության վերաբերյալ և մեկ պատճեն,
- առկայության դեպքում՝ կրթական, բուհական լրացուցիչ վկայականների բնօրինակները և երկուական պատճեն,
- եթե գերմանական բուհի՝ Ձեր ուսումը թույլատրող որոշման մեջ նշված չէ, ապա պետք է ներկայացնել ուսման կամ ուսման նախապատրաստական դասընթացի լեզվի համապատասխան իմացության ապացույց (առանց նախապատրաստական դասընթացի, որպես կանոն, պահանջվում է տվյալ ուսման լեզվի առնվազն B2 մակարդակը): Ընդ որում՝ ճանաչվում են միայն Եվրախորհրդի միասնական եվրոպական գնահատման շրջանակում սերտիֆիկացված հաստատությունների վկայականները (Գյոթե ինստիտուտի վկայական կամ TELC վկայական) կամ Ավստրիական լեզվական դիպլոմը (ÖSD):
- **Ֆինանսական ապահովության** մասին տեղեկանք ողջ ուսման կամ լեզվի դասընթացի ժամանակահատվածի համար. դիմողը պետք է 2021թ. համար իր տրամադրության տակ ունենա ամսական 861, տարեկան՝ 10.332 եվրո:

Ինքնաֆինանսավորման դեպքում դիմողը պետք է Գերմանիայի որևէ բանկում իր անունով

ունենա այսպես կոչված արգելափակված հաշիվ (Sperrkonto)՝ տարեկան պահանջվող նվազագույն գումարով: Կացության ծախսերը վիզայի ընթացակարգում կարող են ապացուցվել արգելափակված հաշվի առկայությամբ: Բանկի ընտրության հարցում Դուք ազատ եք: Հաշիվը պետք է բացել նախապես՝ վիզայի դիմում ներկայացնելուց ԱՌԱՋ: Վիզայի դիմումն ընդունելիս դեսպանությունը կպահանջի բացառապես հաշիվը բացելու վերաբերյալ պաշտոնական հաստատումը, որի մեջ պետք է երևա ներդրված ողջ տարեկան գումարը՝ ամսական առանձին հասանելի գումարների տեսքով: Հաստատումն անբավարար է, եթե նրանում այս գումարների մասին նշված չէ:

կամ

Եթե ուսումը հովանավորում է Գերմանիայի քաղաքացիություն կամ կացության իրավունք ունեցող անձը, ապա պետք է ներկայացվի ուսման ողջ ընթացքի կամ լեզվի դասընթացի ողջ ժամանակահատվածի համար ԳԴՀ Կացության մասին օրենքի 66-68 հոդվածներով նախատեսված հատուկ ձևաթղթով լրացվող պարտավորագիր: Պարտավորագիրը պետք է ներառի „Bonität nachgewiesen“ նշումը

կամ

Տեղեկանք գերմանական կամ եվրոպական հանրային միջոցներից ֆինանսավորվող կրթաթոշակի կամ Հայաստանի կրթական հաստատությունների կողմից հանրային միջոցներից տրվող կրթաթոշակի վերաբերյալ:

- Այլ՝ ոչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք, օրինակ՝ Ռուսաստանի, Իրանի կամ Հնդկաստանի քաղաքացիները իրենց բնակությունը Հայաստանում հավաստելու համար պետք է ներկայացնեն Հայաստանի կացության թույլտվություն՝ ռեզիդենտ քարտ (առնվազն վեց ամսվա):
- Բժշկական բավարար ապահովագրական պաշտպանվածության վկայական
Եթե Դուք որպես ուսանող ցանկանում եք ապահովագրվել օրենքով սահմանված բժշկական ապահովագրության շրջանակում, ապա պետք է նկատի ունենաք, որ այն սկսելու է գործել միայն Ձեր՝ Գերմանիայում բնակության վայրում հաստատվելու և համալսարան ընդունվելու պահից: Եթե Դուք ավելի շուտ եք մուտք գործելու Գերմանիա, պետք է մինչև համալսարան ընդունվելը և օրենքով սահմանված բժշկական ապահովագրության մեջ Ձեր ներառվելը կնքեք ժամանակավոր մասնավոր բժշկական ապահովագրություն: Ճամփորդական բժշկական ապահովագրությունները, հնարավոր է, չապահովեն ապահովագրական պաշտպանվածություն Ձեր ապահովագրության պայմաններում, եթե նախատեսված է երկարաժամկետ և տևական կացություն: Հնարավոր է, որ այսպես կոչված „incoming“ ապահովագրությունները նույնպես չապահովեն այդպիսի պաշտպանվածություն:

Կարևոր ցուցումներ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ վիզայի դիմումը հանձնելիս որևէ այլ վճար, քան **դեսպանության շենքում՝ վիզաների բաժնի պատուհանի մոտ** գանձվող վիզայի վճարն է, նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** տուրիստական ընկերությունների հետ: **Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, չի համապատասխանում իրականությանը:**

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշումները կայացնում է բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում գումար մի՛ տվեք:** Վիզայի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ **դեսպանության վիզաների բաժնի աշխատակիցներից:** Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: